

**ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ
Տոնիկյան Ա. Ս.**

Հոդվածում ներկայացվել է ֆինանսական կայունության էությունը և դրա անհրաժեշտությունը տնտեսության հեռանկարային զարգացման գործընթացում: Կատարվել է ՀՀ բանկային համակարգի ֆինանսական կայունության ցուցանիշների վերլուծություն, ինչպես նաև բանկային համակարգի մրցակցային առավելություններին զուգահեռ դիտարկվել են ֆինանսական կայունության հետ կապված խնդիրները և դրանց հնարավոր լուծումները:

Բանալի բառեր. ֆինանսական համակարգ, ֆինանսական կայունություն, կենտրոնական բանկ, Արժույթի միջազգային հիմնադրամ:

Նախաբան: Ֆինանսական համակարգի կայունության գնահատումը ենթադրում է փոխկապակցված ցուցանիշների խորը վերլուծություն՝ հաշվի առնելով տվյալ երկրում տնտեսական զարգացումները և արտաքին ազդեցությունները:

Հայտնի է, որ ՀՀ ֆինանսական շուկայի խոշորագույն մասնակիցն է բանկային համակարգը, որին բաժին է ընկնում ֆինանսական համակարգի ակտիվների մոտ 89%-ը, ուստի այդ համակարգի կայունությունն առավելապես կախված է բանկային ոլորտի կայունությունից:

Արժույթի միջազգային հիմնադրամը ֆինանսական կայունությունը սահմանում է որպես պայման, որի շրջանակում գնագոյացման, ֆինանսական ռիսկերի տեղաբաշխման և կառավարման տնտեսական մեխանիզմները բավականաչափ ներուժ ունեն տնտեսական գործունեությունը խթանելու համար [3]:

ՀՀ ԿԲ բնորոշմամբ ֆինանսական կայունության ապահովումը ֆինանսական համակարգը փլուզումից կամ խափանումից այնպես զերծ պահելն է, որ համակարգը շարունակի ապահովել անհրաժեշտ իրացվելիության մակարդակ, գործարքների և փոխանցումների անխափան իրականացում, տնտեսությունում խնայողությունների ներդրման ունակության պահպանում [4]: Այս բնորոշմամբ էլ հիմնավորվում է ընտրված թեմայի արդիականությունը:

Աշխատանքի շրջանակում նպատակ է դրվել ուսումնասիրել ՀՀ բանկային համակարգի ֆինանսական կայունության ցուցանիշների դինամիկան՝ կատարելով համապատասխան վերլուծություններ և առաջարկելով բարելավող լուծումներ:

Ֆինանսական կայունության ապահովումը հանդիսանում է մի շարք երկրների կենտրոնական բանկերի առաջնային խնդիրներից մեկը: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ ցածր՝ գնաճը, գործազրկության մակարդակը, բարձր տնտեսական աճը՝ որպես դրամավարկային և այլ պետական մարմինների խնդիրներ, ժամանակակից տնտեսություններում չեն կարող ապահովվել առանց զարգացած և կայուն ֆինանսական համակարգի միջնորդության, որի միջոցով են դրամավարկային քաղաքականության միջոցառումները արդյունավետորեն փոխանցվում տնտեսության մյուս հատվածներին [4]:

Հայաստանում ֆինանսական կայունության ապահովման պատասխանատու մարմինը ՀՀ կենտրոնական բանկն է, ինչն ամրագրված է «Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի» մասին ՀՀ օրենքով:

Ըստ ՀՀ սահմանադրության 200 հոդվածի 2-րդ կետի [1]՝ Կենտրոնական բանկի գլխավոր նպատակն է երկրում գների և ֆինանսական կայունության ապահովումը: Մինչ այս փոփոխությունը ֆինանսական կայունությունը, համաձայն «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի, համարվում է կենտրոնական բանկի խնդիրներից մեկը, սակայն այնուհետև այն դառնում է սահմանադրական դրույթ և կարևորվում է գների կայունության նպատակին հավասար:

Ֆինանսական կայունության գնահատման գործիք է հանդիսանում Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) կողմից մշակված ֆինանսական կայունության ցուցանիշների համակարգը: Ֆինանսական կայունության ցուցանիշները բնութագրում են երկրի ֆինանսական համակարգը, դրա կորպորատիվ հատվածի և տնային տնտեսությունների ֆինանսական առողջությունը:

ԱՄՆ կողմից մշակված ցուցանիշները համադրելի են միջազգային մակարդակում, ինչպես նաև ապահովում են հասանելիություն ու մատչելիություն ոլորտում հետազոտություններ կատարողների համար.

Աղյուսակ 1.


ՀՀ բանկային համակարգի ֆինանսական կայունությունը բնութագրող ցուցանիշների դինամիկան (%) [2]

Ստանդարտի համարը	Ցուցանիշներ	2015	2016	2017	2018	2019	Հարաբերական շեղումը (+-տ.կ.) 2019/2018 համեմատ
I001	Նորմատիվային ընդհանուր կապիտալի հարաբերությունը ռիսկով կշռված ակտիվներին	16.2	20	18.6	17.7	17.6	-0.7
I002	Նորմատիվային հիմնական կապիտալի հարաբերությունը ռիսկով կշռված ակտիվներին	14	16.4	15.2	15.2	15.2	0.1
I004	Չաշխատող վարկերի հարաբերությունն ընդհանուր վարկերին	8	6.7	5.5	4.8	5.5	14.7
I006 ¹	Շահութաբերությունը՝ ըստ ակտիվների (ROA)	-0.5	1.1	1.4	1.2	1.5	26.9
I007 ¹	Շահութաբերությունը՝ ըստ կապիտալի (ROE)	-0.35	7	8.6	7.6	10.3	35.5
I010	Բարձր իրացվելի ակտիվների հարաբերությունն ընդհանուր ակտիվներին	28	32.5	32.1	27.3	27.1	-0.8
I011	Բարձր իրացվելի ակտիվների հարաբերությունը ցածրաարժեքի պարտավորություններին	142.4	170.8	141.7	116.6	111.7	-4.2

Ըստ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 30.12.2014 թ. որոշման՝ 2017թ. հունվարի 1-ից հայաստանյան բանկերի նորմատիվային ընդհանուր կապիտալի նվազագույն սահմանաչափը սահմանվել է 30 միլիարդ դրամ, որը նպաստել է ֆինանսական կայունության

ցուցանիշների բարելավմանը և վարկավորման ծավալների ավելացմանը:

Հաջորդիվ ավելի պատկերավոր ներկայացվում է ֆինանսական կայունության ցուցանիշների դինամիկան.



Նկար 1. ՀՀ բանկային համակարգի ֆինանսական կայունության ցուցանիշների դինամիկան 2015-2019թթ. [4]

Բազել II-ը պահանջում է, որ ընդհանուր կապիտալի հարաբերակցությունը լինի ոչ պակաս, քան 8%: Աղյուսակ 1-ի տվյալները և Գծապատկեր 1-ը ցույց են տալիս, որ ՀՀ-ում բանկային համակարգը և այլ ֆինանսական հաստատություններ բավարարել են ՀՀ բանկային համակարգի նորմատիվի փաստացի մեծությունը, մասնավորապես՝ կապիտալի համարժեքության ցուցանիշը (RWA՝ նորմատիվային ընդհանուր կապիտալի հարաբերությունը ռիսկով կշռված ակտիվներին) բավականին բարձր է եղել՝ չնայած 2019 թվականին նախորդ տարվա համեմատ նվազել է 0.7 տոկոսային կետով: 2018թ.-ին 18.6%-ից դարձել է 17.7%, որի հիմնական պատճառը վարկային պորտֆելի աճն է, ինչպես նաև ներգրավված երկարաժամկետ ստորադաս փոխառությունների կրճատումը:

Բազել III-ի պահանջի համաձայն՝ հիմնական կապիտալի հարաբերակցությունը պետք է լինի ոչ պակաս, քան 6%: Վեց տոկոս և բարձր նորմատիվային կապիտալ ունենալու պարագայում համակարգը համարվում է լավ կապիտալացված: Ուսումնասիրվող հինգ տարիների

ընթացքում այս ցուցանիշը նույնպես բավականին բարձր է՝ տատանվելով 14-16.4%-ի սահմաններում:

2019 թվականին վարկային պորտֆելում չաշխատող վարկերի տեսակարար կշիռն աճել է նախորդ տարվա համեմատ 14.7 տոկոսային կետով: Ըստ տնտեսության ճյուղերի բաշխվածության՝ չաշխատող վարկերի կշիռները համեմատաբար բարձր են սպառողական, հանրային սննդին և սպասարկման այլ ոլորտներին, տրանսպորտի և կապի ոլորտներին տրամադրված վարկերում: Ընդհանուր վարկային պորտֆելի որակի անկումը կարելի է կապել վերջին տարիներին վարկատու կազմակերպությունների կողմից վարկունակության գնահատման մեղմ գործիքակազմի կիրառման հետ:

ROA-ն, որը ցույց է տալիս ակտիվների մեկ միավորին ընկնող շահույթի մեծությունը, ուսումնասիրվող ժամանակահատվածում տատանվել է վերջին տարում գրանցվել է 1.5% շահութաբերություն, որը ակտիվի հատուցման տեսանկյունից ցածր է, սակայն հաշվի առնելով, որ այն համակարգին է վերաբերում և գոնե 0.5 տոկոսով գերազանցում է ցպահանջ պարտավորությունների տարեկան գնին, ուստի կարելի է համարել դրական:

ROE-ի՝ կապիտալի շահութաբերության ցուցանիշի գծով համեմատաբար ավելի բարձր է ներդրումների հատուցումը բանկային համակարգում: 2015 թվականին ցուցանիշի կտրուկ անկում է նկատվում, որը կազմել է 4.85% (2014՝ 4.5%), ինչը պայմանավորված է բանկային համակարգում 2015թ. 20.7 մլրդ դրամի զուտ վնասով, չնայած 2019 թվականի վերջում արձանագրվել է 10.3% շահութաբերություն, ինչը բավականին գրավիչ ցուցանիշ է:


Այդուհանդերձ հետաքրքրական է ամրագրել, որ բանկային համակարգի շահութաբերության ցուցանիշները 2015թ. թերակատարվել են. ըստ կապիտալի՝ շահութաբերությունը ծրագրվածից փոքր է եղել 9.9 տոկոսային կետով, իսկ ըստ ակտիվների՝ շահութաբերության ցուցանիշը կանխատեսվածի համեմատ թերակատարվել է 1.5 տոկոսային կետով:

2015թ. բանկային գործունեության վրա մեծ ազդեցություն են ունեցել ՌԴ-ում առկա տնտեսական հիմնախնդիրները, որոնցից կարելի է առանձնացնել Ռուսաստանի Դաշնության նկատմամբ ԱՄՆ և եվրոպական երկրների կողմից ընդունված պատժամիջոցները, Ուկրաինայի հետ կապված աշխարհաքաղաքական լարվածությունը, պարտքային պարտավորությունների գծով վճարների աճը,

Ռուսաստանի վարկանիշների իջեցումը, ռուբլու արժեզրկումը, բորսայական ինդեքսների անկումը, «չաշխատող» վարկերի՝ 2015թ. ողջ ընթացքում աճը:

Ուսումնասիրվող ժամանակահատվածում ընդհանուր և ընթացիկ իրացվելիության նորմատիվային ցուցանիշները ավելի շուտ անկման միտում են ունեցել, ինչը դրական երևույթ չէ, սակայն, ընդհանուր առմամբ, տատանումները մեղմ են եղել. ՀՀ ԿԲ կողմից դիտարկվող հնարավոր վատագույն սթրես-սցենարներում բոլոր բանկերում բարձր իրացվելի ակտիվներն ամբողջությամբ բավարար են դրամական միջոցների սիմուլացվող արտահոսքը ծածկելու համար:

Բանկային համակարգի կայունությունը գնահատելու նպատակով ՀՀ ԿԲ-ն պատկերավոր կերպով այն ներկայացնում է կայունության քարտեզի օգնությամբ, որն արտացոլում է բանկերին բնորոշ ռիսկերը բնութագրող ցուցանիշների փոփոխությունը երկու ժամանակաշրջանում: Բանկային կայունության վարքագծի վերաբերյալ ընդհանրական պատկերացումը տրվում է տոկոսադրույքի ռիսկի, արտարժույթի ռիսկի, կապիտալի համարժեքության, ակտիվների որակի, եկամտաբերության և իրացվելիության ցուցանիշների դինամիկ փոփոխության օգնությամբ:



Նկար 2. ՀՀ ֆինանսական համակարգի կայունության քարտեզը [4]

Արժեքների մոտեցումը քարտեզի կենտրոնին վկայում է ռիսկի նվազման, իսկ կենտրոնից հեռացումը՝ ռիսկի աճի մասին:

Բանկային համակարգի կայունության քարտեզի բաղադրիչները 2019թ. վերջում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ

որոշակիորեն փոփոխվել են: Արտարժութային, տոկոսադրույքի ռիսկերի, ինչպես նաև ակտիվների որակի և շահութաբերության ենթահինդեքսների գծով գրանցվել են դրական տեղաշարժեր: Նվազել է իրացվելիության ռիսկի ենթահինդեքսը: Որոշակի փոփոխություն է կրել նաև կապիտալի համարժեքության ենթահինդեքսը, որը պայմանավորված է կապիտալի համարժեքության ցուցանիշի որոշակի նվազմամբ:

Օգտվելով մակրոտնտեսական բարենպաստ միջավայրի հեռանկարից և իրացվելի միջոցների առկայությունից՝ բանկային համակարգը վերջին տարիներին հնարավորություն է ունեցել ընդլայնելու վարկային պորտֆելը՝ ավելի մատչելի դարձնելով վարկային ռեսուրսները: Վարկային շուկայում մրցակցության աճի և դրամավարկային մեղմ պայմանների պահպանման պարագայում դիտարկվել է տոկոսադրույքների նվազում, իսկ իրացվելիության ցուցանիշների նվազումը պայմանավորված է բացառապես վարկավորման աճով:

Ուսումնասիրելով ՀՀ բանկային համակարգը ֆինանսական կայունության ցուցանիշների վերլուծության համատեքստում՝ կարելի է առանձնացնել բանկային ոլորտի որոշ մրցակցային առավելություններ, այդ թվում՝ ճկունությունը, խիստ կանոնակարգված վերահսկողությունը, թափանցիկությունը, կորպորատիվ կառավարման կայուն հիմքերը, բանկային ակտիվների բարձր լիկվիդայնությունը, ինչպես նաև մակրոտնտեսական ցուցանիշների շարունակական աճի կայուն հիմքերը:

Չնայած վերոնշյալ առավելություններին՝ արդիական են ՀՀ-ում ֆինանսական կայունության պահպանման և ամրապնդման խնդիրների մշտադիտարկումը, մասնավորապես՝ դոլարայնացման բարձր մակարդակը, գնաճի նպատակային ցուցանիշը, բանկերում չիրացված գույքի վերագնահատումը և բանկերի սեփական ռեսուրսներով վարկավորման պայմանները:

Հայաստանյան առևտրային բանկերն ու վարկային կազմակերպությունները շարունակում են միջոցներ ներգրավել արտերկրից և, հետևաբար, արտարժութային ռիսկից խուսափելու նպատակով ձգտում են դրանք տեղաբաշխել այն արտարժույթով, որով ներգրավել են:

ԿԲ կողմից վերաֆինանսավորման տոկոսադրույքի նվազեցումը համահունչ ազդեցություն է ունեցել ինչպես միջբանկային և արժեթղթերի շուկաներում, այնպես էլ վարկային ու ավանդային

շուկաներում տոկոսադրույքների նվազման վրա: Վերջին ժամանակաշրջանում նվազել են ինչպես սպառողական, այնպես էլ հիփոթեքային վարկերի տոկոսադրույքները:

Ֆինանսական համակարգի կայունության ապահովման տեսանկյունից՝ անշարժ գույքի շուկայում առուվաճառքի գործարքների քանակի աճը դրական ազդեցություն է ունեցել անշարժ գույքի շուկայից բխող ռիսկերի վրա, սակայն ֆինանսական հաստատությունների կողմից անշարժ գույք հանդիսացող գրավի առարկայի իրացման հնարավորությունները դեռևս շարունակում են մնալ սահմանափակ:

ՀՀ բանկային համակարգը ֆինանսական անկայություն ձեռք բերելու համար պետք է պայքարի դոլարայնացման դեմ, քանի որ դրա մակարդակի նվազումն ապահովում է երկրի համար առավել կայուն դիրք արտաքին ֆինանսական շուկերից և հնարավորություն է տալիս ԿԲ-ին առավել արդյունավետ կերպով իրականացնել դրամավարկային քաղաքականություն՝ արդյունավետորեն կառավարելով գնաճը:

Քանի որ ՀՀ առևտրային բանկերի ակտիվները հիմնականում տեղաբաշխված են վարկերի տեսքով, ինչը կարող է խախտել բանկային համակարգի ֆինանսական կայունությունը, առաջարկվում է ներդրումների պորտֆելը դիվերսիֆիկացնել արժեղթերում կատարվող ներդրումների ծավալներն ավելացնելու միջոցով:

Ինչ վերաբերում է միջոցների ներգրավմանը, ապա կարելի է ոչ միայն ավանդների տեսքով ներգրավել, այլև հաճախորդներին առաջարկել իրենց ազատ դրամական միջոցներով ձեռք բերել պարտատոմսեր, քանի որ դա բանկերի տեսանկյունից ավելի քիչ ծախսատար է:

Վերջին տարիներին շատացել են կիբերհարձակումները, և հետևաբար կարևոր է դրանք որպես ֆինանսական կայունության ռիսկ դիտարկել: Կիբերհարձակումները կարող են իրականացվել ինչպես ֆինանսական նպատակներով, այնպես էլ տեխնիկական համակարգերի ինֆորմացիան ոչնչացնելու համար:

Եզրահանգում: Ամփոփելով կարելի է փաստել, որ Հայաստանի բանկային համակարգը շարունակում է պահպանել կայունությունն ու բավարար ճկունությունը, սակայն ներքին և արտաքին ազդակները պահանջում են մշտական հետևողականություն և կարգավորման հայեցակարգային մոտեցումներ:

Բանկային համակարգի ֆինանսական կայունության ամրապնդման համատեքստում առաջնային հիմնախնդիր է չաշխատող

վարկերի վերադարձելիության ապահովումը, ինչը կապված է դատական գործընթացների տևականության և արհեստական սնանկությունների հետ:

Բանկերի ֆինանսական կայունության ապահովման գործիքակազմում անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել բանկերի հաճախորդների վարքագծի փոփոխությանը. արտակարգ կամ ռազմական դրության պայմաններում բանկերի հաճախորդները սովորաբար դրսևորում են խուճապային վարքագիծ, ինչը կարող է ցնցումների ենթարկել ֆինանսական կայունությունը: Նշված խնդրի լուծման համար խիստ կարևոր է բանկային համակարգում տեղեկատվական խողովակների և հաղորդակցությունների արդյունավետ կառավարումը՝ անկախ նրանից՝ տվյալ պահին ֆինանսական կայունության ցուցանիշների գծով ինչ թվեր են արձանագրվել:

АНАЛИЗ ПОКАЗАТЕЛЕЙ ФИНАНСОВОЙ УСТОЙЧИВОСТИ БАНКОВСКОЙ СИСТЕМЫ РА

Тоникян А. С.

В статье раскрывается сущность финансовой устойчивости и ее необходимость в процессе перспективного развития экономики. Был проведен анализ показателей финансовой устойчивости банковской системы РА, а также параллельно с конкурентными преимуществами банковской системы были рассмотрены проблемы и возможные решения финансовой устойчивости.

Ключевые слова: финансовая система, финансовая устойчивость, центральный банк, Международный валютный фонд.

ANALYSIS OF THE FINANCIAL STABILITY INDICATORS OF THE BANKING SYSTEM OF RA

Tonikyan A. S.

The article reveals the essence of financial stability and its necessity in the process of prospective economic development. The analysis of indicators of financial stability of the banking system of RA was carried out, and, in parallel with the competitive advantages of the banking system, the problems and possible solutions to financial stability have been considered.

Keywords: financial system, financial stability, Central Bank, International Monetary Fund.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ Սահմանադրություն (ընդունման ամսաթիվը՝ 06.12.2015թ.)
2. Հայաստանի ֆինանսական կայունության հիմնական ցուցանիշները
https://www.cba.am/am/SitePages/fsindicators_FSI.aspx, (04.08.2020)
3. Արժույթի միջազգային հիմնադրամի պաշտոնական կայքէջ
<https://www.imf.org/en/Countries/ARM> (04.08.2020)
4. ՀՀ Կենտրոնական բանկի պաշտոնական կայքէջ
<https://www.cba.am/am/SitePages/fsreport.aspx> (04.08.2020)

Տեղեկություններ հեղինակի մասին

Տոնիկյան Ա. Մ. – տնտեսագիտության թեկնածու
Հայաստանի ազգային ազրարային համալսարան
Էլ. փոստ՝ arman.tonikyan@yahoo.com

Տրվել է խմբագրություն՝ 06.08.2020
Գրախոսվել է՝ 02.12.2020